Արձանագրություն №2
№216/GArm/26_5.4_093/22.06.26 ծածկագրով
Մրցակցային ընտրության հանձնաժողովի

ք.Երևան **30 հունիսի 2026թ.**
Ժամը 11:15

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Լալայան
Հանձնաժողովի անդամներ՝ Վ.Մակարյան, Հ.Յումուշաղջյան, Տ.Հայրապետյան, Կ.Մինասյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Հարությունյան

1. Մրցակցային ընտրության հայտերի բացման նիստ

1. Մրցակցային ընտրության փաստաթղթերով սահմանված կարգով և դրան համապատասխան կազմված ծրարով հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/Հ	Մասնակիցներ	Հասցե
1	«Այ Թի Պրոջեկտ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 3ա/1

Բոլոր մասնակիցների կողմից մրցակցային ընտրության փաստաթղթերով պահանջված փաստաթղթերը առկա են և համապատասխանում են մրցակցային ընտրության փաստաթղթերով սահմանված կարգին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3 , դեմ - 0:

2. Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են.

Հ/Հ	Մասնակիցների կողմից առաջարկվող գները՝
1	«Այ Թի Պրոջեկտ» ՍՊԸ՝ 10092500 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ

Ներկայացված գնային առաջարկի հիման վրա հանձնաժողովը որոշեց.
Մրցակցային ընտրության ընտրված մասնակից ճանաչել «Այ Թի Պրոջեկտ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3 , դեմ - 0:

3. Հանձնաժողովը որոշեց անմիջապես գնահատել մասնակցի որակավորումը և նրա համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

ա. Մասնակցի որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3 , դեմ - 0:

բ. Հանձնաժողովը որոշեց գնահատման թերթիկները լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

գ . Հիմք ընդունելով գնահատման թերթիկը և այն հանգամանքը, որ ընկերությունը ունի բավարար ռեսուրսներ, գնային առումով ներկայացրել է ընդունելի առաջարկ հանձնաժողովը որոշեց անմիջապես հաստատել գնահատման արդյունքները.

«Այ Թի Պրոջեկտ» ՍՊԸ - բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3 , դեմ - 0:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից իրականացվող գնումների մասին կարգի համաձայն, հանձնաժողովը որոշեց մրցակցային ընտրության հաղթող ճանաչել «Այ Թի Պրոջեկտ» ՍՊԸ-ին՝ որպես բավարար գնահատված մրցակցային ընտրության հայտ և տնտեսապես շահավետ գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3 , դեմ - 0:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից իրականացվող գնումների մասին կարգի համաձայն, եթե հայտ է նեկայացրել մեկ մասնակից ապա անգործության ժամկետ կիրառելի չէ, հանձնաժողովը որոշեց ամփոփել մրցակցային ընտրության արդյունքները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3 , դեմ - 0:

2. Մրցակցային ընտրության արդյունքների մասին

Հանձնաժողովը որոշեց.

Պատվիրատու՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի, որը գտնվում է ք.Երևան Թբիլիսյան 43 հասցեում և Կատարող՝ «Այ Թի Պրոջեկտ» ՍՊԸ-ի, որը գտնվում է ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 3ա/1 հասցեում, միջև կնքել պայմանագիր, որի գինը կկազմի 10092500 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3 , դեմ - 0:

Հանձնաժողովի.		
Նախագահ՝		Ա. Լալայան
Անդամներ՝		Վ.Մակարյան
		Հ.Յումուշաղջյան
		Տ.Հայրապետյան
		Կ.Մինասյան
Քարտուղար՝		Ա.Հարությունյան